



U. S. U.

1863

10. 1. 1. 3

Տարեկան Գինեկ 24 դուբալ :

1) եցանախայ գիննէ 12 դուրուշ :

Մէջ հարաւ 40 փարոց :

միայն և զօրանալք Արարչի լուսով և փրկչի
յուսով :

Սակայն ընդէ այն , զարկի՞ն զմեզ, բա՛ն
այ, կանչե՛ր ցո՛ւ : Ս' իրաւորեցին՝, ոչ ինչ,
մի կ ժբես : Տո՛ւնէ՛ր հալածեցի՞ն, գնա՞
րիշ տեղ մի՞ գտիր, բայց ընչպէս, ան՝ ա՛յ
ու գիտես : Հաց ապրուստ ձեռքէ՛դ խը

የጊዜ ሰሌዳ

Իմ կր թ. Օրծ դանք

Արեմն ինչեմբ մեք այս ուղեսյուն թեանց
մէջ, ի՞նչ կ'թափտահենք, ինչ կ'խորխորինք
կոյր գիշոր, եւ ինչպէս կ'ազգայինք : Ա՛՜վ գիտե .
միայն Աստուծոյ փէշիցը բռնած , նորալու-
սաւոր եւ հզոր անուէր դաւանելով ինկած
եմք մի խաւար և տառապեալ կ'ենդհիմէջ :

լեցին, ագռաւի պէս ապրիր : Ինչո՞ւ կուլաս
եղբայրդ սպանեցին : Աստուած հոգին լու-
սաւորէ, որ մի պիտի մեռնէր : Եւ ասանաս
խեղճութիւնից զաւակներդ մեռնին, գը-
լուխդ ողջ մնայ, Տէր ետ եւ Տէր էաւ :

Ի՛նչ, այս ամէն բաներ անցան ու կանց-
նին, տեա՛ր ունայնութիւն : Եթէ այս է
եղիւր աշխարհք, այս է մարդու վիճակ, ու-
րեմն լա՛ւք թէ ծրծրանք :

Լորբեմուլանք, երբեմն ծրծրանք :

Լորբէք ոչ լանք եւ ոչ ծրծրանք :

Ս՛եք ուրիշ բանի համար եմք : Ծնած ենք
որ աշխատինք, մարդ եղած ենք, որ գործենք :
Ուրեմն աշխատենք եւ գործենք :

Տես մեր ձեռները, ինչպէս յարմար եւ
կազմեն գործելու համար : ամէն կերպ ար-
հեստներ կգործվին անով : ամէն կերպ ճար-
տարութիւններ կշինուին անով : մարդ կային
մտաց խելաց ճարտարսպետն է ձեռք : Թէ
տուն շինես, Թէ գիր շարես, Թէ մաճ բրու-
նես Թէ պատկեր նկարես, Թէ ծաղիկ քաղես
Թէ սուր գործածես, վերջապէս ինչ որ ու-
զես ձեռներով կգործես, Աստուածն է կազ-
մեր Աստուածն է շնորհեր :

Ի՛նչ որ ունի այն մարդ, մի Թէ պակաս
է քեզ : բայց նա երջանիկ՝ դու մերկ : նա
կուշտ՝ դու անօթի կմեռնիս, պատճառն
ի՛նչէ, վաճառի նա գործեր, դու խաղցեր ես :
նա քաջ, դու վախցերես :

Ի՛նչ զարմանք է աշխարհիս մէջ մէկն ու-
նեւոր միւսը չունեւոր : վաճառի նա աշխա-
տեր, իսկ սա անհոգ նստերէ : Ի՛նչ բան է
մէկն իմաստուն եւ փառաւոր : միւսը ա-
նարգ է եւ տխմար : վաճառի նա հեռեւեր
ուսեր եւ խելք է ստացեր : սա ունայն տեղ
ուտելով խմելով եւ զուարճանալով միայն
իր օրերն անցուցեր :

Ի՛նչէ այն : մէկն թագաւոր միւսը գերի :
վաճառի սա կուրուծեամբ Թուրքութեամբ
կորուսէր, նա լուսաւորութեամբ արիւն-
թեամբ գտեր ու տիրեր է :

Ինչի՞ համար մէկն կուշտ կուշտ կուտէ
ու զգաւոր կը շարունակէ : իսկ միւսը կուլայ
եւ կմեռայ, ու վերջապէս անօթի քաղցած
մահու գիւղի մէջ կը քնանայ : վաճառի
սա իր փառքն անմոռութեամբ փոքր ըզ-
բօսաւ : Ինչ որ եւս ինչ է, անոր ինչ է :
աքնէ :

Ի՛հա ուսնինք մեր ապրելու կերպը : գոր-
ծենք, վաստկենք որ հանգիստ ուտենք, ծու-
լութիւն չանենք, յիմարութիւն թողնենք,
որ մեր վաստակը շատ լինի եւ մեր ապրուստ
երջանիկ : վաստակաւոր մարդու հայր տա-
նելով չի սպասիր : Թէրութեան տալով չի
հաւանիր : Թշնամին խելով չի պակսիր : այլ
մեզ փոսող եւ մեր աղքատութեան պատ-
ճառ մեր ծուլութիւն, Թուրքութիւն, յի-
մարութիւն, եւ այս վիճակի մէջ տակաւին
հպարտութիւն անելն է : Վիժէք եղբայր-
ներ, Թէ Թէրութիւն տասէն մէկ կտանի,
Թէ քանսուր որչափ որ յափշտակէ, դեռ
մեծ մասը մեզի կմնայ : բայց մեր մէջ այն-
պիսիք կան որ իրենց հաճոյից (քէֆի) հա-
մար յանկարծ մէկ ժամու մէջ տարիներով
վաստկածը կզոհեն : Տէրութեան օրէնքներ
շատ քաղցր են մարդու համար, եւ Աստ-
ուածային իրաւունք մի է տալ տասանորդ
մեր վաստակէն : ասոր մէջ ոչ դժուարութիւն
կայ եւ ոչ աւերութիւն, մեք մեզմէ գան-
գատ անենք : զմեզ աղքատացնող մեր ախ-
տերն են :

Ի՛թէ վարժատուն չինելու, վարժապե-
տին վարժք տալու, կամ մէկ եղբոր օգնե-
լու համար կօտմի սորեն խնդրուի : դժուար
կուգայ : անհոգ բարի ու օգուտկար բանե-
րու կը խնայէք, անիրաւութեան ձեռներ
կսկսեն խել զայն :

Ս՛եք վիճակին յարմար ու այս ժամանա-
կին արժան է հետեւեալ խրատներուն ա-
կանջ դնել եւ այնպէս վարվիլ, զոր բարի
խելացի եւ իմաստուն փիլիսոփայ մի կխօսի :

« Ո՞վ մարդ, դուն քեզի օգնէ, որ Աստու-
ածն ալ քեզի օգնէ :

« Աշխատող մարդ շատ կապրի, վաստակ
եւ պնտիւն կունենայ : դատարկ մարդ շուտ
կմեռնի, անքաւ եւ անարգ վիճակ կունենայ :

« Որչափ տալիք շատ ունենանք, այնչափ
աղաքատեանք շատ պիտի ունենանք : Թէ ան-
հոգ ծուլութեամբ քնանանք անմասն եմք :

« Եղբայր քուն եղած ժամանակ, կարող
է հաւ արտալ, մարդ իրապի մէջ չի կարող
հաց վաստկել : երկուք քնանալու տեղը դերեզ
մանն է :

« Դամանակ պարսպ անցուցող, իր կեանք
կկորսնցնէ : Դամանակն է մարդու ամ-
մէն բան տուող :

Թշուառ է իւր հայրենեաց մէջ :

« Ըմենամեծ եւ անտանելի զրկանք եղաւ մեզի այս տարուան թաշիր. որոյ սկըռւած, զիպուած եւ ուր տեղ հասածը ձեզ յայտնի է անշուշտ : Սենք կարողութիւն չունէիք եւ այժմ իսկ չունիմք մեզ վերայ առնել. բայց գուցէ ի կարին արդէն սուտ ու փուտ թղթերով եւ խարդախ կընկերներով լեցուցած են մեր գլխաւոր համար ուտաներ, քանիմ անձինք. որոնք երկրին եւ բնակիչսան չեն. ապա թէ ոչ թող ի գիմաց ամենից այդ կնիք տու օղները վճարեն. հասարակութիւն ի հոգի եւ ի մարմին մտնուած թէ կամաւ թէ ակամայ կարողութիւն չունին տալու. ունենք քակէ ծախէ, եթէ ոչ ի տաւարները վաճառէ, իւր բերնի հացը կտրէ. առկաւին կարող չէ, ո՛հ Ժողովուրդ ցամաքեր է :

« Սեք ան հասարակ մեր անձը մեր պարտուց փոխարեն տալով առկաւին ազատ չեմք լինիր. եւ այսպիսի պարտքեր, այսպիսի առարքեր են եղած են մեզ վերայ :

« Հարկերը իրենց ուղածին պէս կը բաժնեն եւ իրենց ուղածի չափ կ'ազանջեն ու կ'առնեն. ոչ քաղաքականութիւն գիտենք ոչ օրէնագիտութիւն, ոչ գիր ոչ հաշիւ. ինչ որ առնին ճշմարտ կ'կարծենք. ինչ որ հրամայէին իրաւունք կ'համարենք. բայց այսուհետեւ փոքր ի շատե՛ հեռ գհնա՛ն պիտի քննենք, պիտի գրենք եւ պիտի բողոքենք մինչեւ յերկինս մինչեւ Բարձրագոյն դուռը. արդարութիւն հասնի մեզ :

« Թաշիրի մասին շատ աշխատեց մեր Առաջնորդը. բայց Առաջնորդի բազակայութեան յանկարծ մէկ գիշերուան մէջ քանիմ հին նոյն եւ նմանները զիրար գտնալով լարեր հիւսելին. փոսեր փորեցին. որոնք իրենց շահուց եւ պատուոյ համար սուրբ էին աղքատները մնտնել եւ կեղեքել. ահա այս անգամ եւս զնոյն արարին : Յանկարծ փոխվեցաւ եղանակ, մնտովեցաւ մեր վիճակ, վնայ մեր կեանք. հրաման ներհակ, վճիռ անիրաւ եւ ձախորդ կերպարանք զգեցաւ այս գործ :

« Դուքէ ցայժմ մինչեւ ի՞նչ դուռը հասուցած լինին մահօտներ. կամ իբր թէ մեր հաճութեան գիրքը մեր կնիքներով, սա-

կայն ահա համարձակ կ'ըողրքեր. այդ կընիք քանիմ անձանց է մինակ, եւ այն Ժողոված են մեզմէ կերպ կերպ հնարքներով թէ սուտ համոզմամբ, թէ բռնութեամբ եւ թէ խոտամամբ. եւ այնպիսի միջոցներով որոնց մէջը երկիւղ եւ անիրաւութիւն կայ. այսպէս մեզմէ կնիք առին. իրենք գրեցին իրենք կնիքցին ու հաստատեցին թէ — Դուրսդուրդն հիւսնիւ լիզայով ընդունեց ըզ-Թաշիր :

Սէ, ոչ, ամենեւին ոչ, վասնզի ով կարէ այսպիսի բեռ մի շարկել. որոյ ծանրութիւն մեր քամակի ոսկորները կ'ջարդեն :

« Ինչ սովորութիւն կամ արտաքոյ արքունի իրաւանց օրէնք է այս միայն մեր աշխարհին, որ զԹաշիրն գեղացին առնէ, մէկին տեղը բազմապատիկ տայ. եւ փարայ պիտի տայ. կարծես փարայ կ'ցանենք փաւայ կ'հնձենք :

« Եթէ այսպէս է Տէրութեան օրէնք, մենք չ'խօսինք երբեք. ապա թէ ոչ նորա իրաւանց շնորհքն ու խնամքը կ'հայցենք փութով հասնի մեզ վերայ :

« Եյս ամեն աղէտներ ու ցուեր բառնալու համար, միակ ճար եւ հնարն է մի արդ սրտաւր. գորովագութ, խոհմ, հօգօր, հոգադորձութեան ոյժ տրոգ, բարբարոսները զսպող, հպտատկները պաշտպանող պիթուն եւ իմաստուն Գայեազամը. որ նստի ի Սուշ : Սուշ չի կառավարու իր առանց փաշայի, ընդարձակ է այս վիճակ. մի՞՞ք է նորա սահմանները. շատ են իւր բնակիչք. շատ մեր թշնամիք. անիրաււներ, բռնաւորները, որոնց երեսէն է որ այսպէս շատ խեղճ ենք եղեր : Ի սէր Աստուծոյ մի թողուք կորսուինք մեք, մի թողուք աւերի մեր հայրենիքը, ապրեցուցիք զՏարօն, կաղաչէ զձեզ Տարօն :

Իւր ամէն գեղերով տա
ապաւալ հասարակութիւն,
Իէսներ եւ Համբաներ :

Խմբագիր Տարօնայ Երժուիկիս :
Գ. Սուրանձատեանց Ն'ւա Ս. Երժուոյն :

Ի Տպարանի Ս. Երժուոյն
Տարօն Ս. Կարապետի Հ. վանքը :